## ԽՈԿՈՒՄՆ.

Երջանիկ ժամ՝ երբ ունիս գալ,
Լցուցանել փափաք սրտիս.
Խոկալ միայն և ոչ ջանալ՝
Զէ գործ իրաւ Ազգասիրիս.

Այլ ճշմարիտ Ազգասիրին
Հանապազօր միտք աշխատին,
Զի օգտակար և վայելուչ
Գործովք սպաս հարցեն ազգին.

Հապա՞ պարտէ, ո՞վ Ազգասէր,
Առքեզ յուսալ, ի քէն խնդրել,
Զի մեր գործոց լիցիս ուղղիչ
Միրոյ կայան և կազդուրիչ.

Մատուցանեմ անկեղծ սրտով
Սիրայորդոր բանիցդ՝ զով,
Բայց ասացից ոչ բերանով,
Որ յայտնեսցէ գոնէ կիսով.

Հոգիս յօժար մարմին տկար,
Ո՞վ ինձ տացէ բան և հանճար.
Ցումմէ՞ գտից ինձ օգնութիւն,
Ցո՞ դիմեցից, յա՞զգ թէ յօտար.

Ցո՞ւր աղաչեմ, տո՞ւր ինձ բար-
բառ
Ցո՞ւր ցէր օճան, տուր և զկար,
Զեռք փութաջան, միտք կամա-
կար.
Գործել ինձ զայն՝ որ է յարմար.

---

## ՊԱՏԵՐԱԶՄ ԽՕԼԵՐԻ ԴԷՄ

Բոլոր տէրութիւնները հրատարակումեն պատուէրներ և կանոններ ի գիտութիւն իրանց ժողովրդեան՝ խօլերից զգոյշ կենալու համար։ Այստեղից երևումէ թէ որքան ծանրակշիռ հարց է խօլեր հիւանդութիւնը. ուստի այստեղ դնումենք այնպիսի կանոններ որոնք պահանջումեն ամենասակաւ նիւթական միջոցներ։

Խօլեր եղած տեղից թոյլ չըտալ բնակիչներին ոչ մի պայմանով գաղթել մի ուրիշ տեղ, որովհետև գաղթելովը հիւանդութիւնը տարածվումէ աւելի և աւելի. մանաւանդ որ նոյն տեղը մնալով և կանոնաւոր կեանք վարելով կարելի է չըհիւանդանալ։ Մի տնից կամ տեղից՝ ուր խօլեր կայ, կերակուրի համար նիւթեր չըբերել. իսկ եթէ չէ յայտնի ուտելիքի որտեղից լինելը, լաւ է գործ դնել նորան եփած. մանաւանդ հարկաւոր է կաթը հում գործ չդնել։ Մարտողական գործարանները պէտք է կարգին պահել. ուստի զգուշանալու է դժարամարս և փորլուծութիւն պատճառող ուտելիքներից. իսկ եթէ մի փոքր խանգարումն եւ լինի մարսողա-

կան գործարանների, պէտք է խոկոյն և եթէ բժշկուել։ Խստիւ պէտք է խոյս տալ այնպիսի ջուր գործ դնելուց, որ կարող է ապականուած լինել մարդու կղկղանքով. կաւկծաւոր է ջուրը այն հորերի, որոնք խոր չեն և ուր հաւաքւումեն անմիջապէս սուզուած ջրերը. ճահիճների, լճերի, առուների և գետերի ջրերը և ուր հաւաքվումեն կեղտոտ ջրեր՝ նոյնպէս անվտանգ չեն։ Մանաւանդ վտանգաւոր է այն ջուրը, որը որ և իցէ կերպիւ ապականուած է խոլերով հիւանդի կղկղանքից։ Հարկաւոր է ուշ դարձնել որ ամանների և կեղտոտ շորերի լուացած ջուրը չընկնի ջրհորների և առուների մէջ, նաև մօտիկ չթափուի։ Եթէ ապահով անվտանգ ջուր չէ կարելի գտնել, այն ժամանակ լաւ է գործ դնել եռ եկած ջուր. վերջինս պէտք է հովացնել ծածկած ամանի մէջ, որպէս զի դրսից բան չընկնի մէջը։ Զրի վերայ ասածները վերաբերում է ոչ միայն խմելու ջրին, այլ ինչ որ տան մէջ գործ է դնվում։ Խոլերով հիւանդի հետ հաղորդութիւն չըպէտք է ունենալ. նորան պէտք է հեռացնել մի առանձին տեղ. և պէտք է ինամուին առանձին մարդիկներով. խոլերով հիւանդի շորերը և այլ իրեղէնները եթէ չէ կարելի վարակազուրկ անել հինգ տոկոս կարբոլի թթու ունեցող ջրով լաւ է ջրի մէջ եռ տալ կամ այրել։

Բայց ամենագլխաւոր նախազգուշութիւնն է մաքուր օդը. ուստի հարկաւոր է պատուհանները և դռները միշտ բաց պահել, որպէս զի ապականուած օդը կարողութիւն չունենայ թանձրանալու։ Վերոյ ասածները եթէ կատարուի՝ չէ կարելի հիւանդանալ։

Բժ. Մ. Զ.

---

# ԱԶԳԱՅԻՆ

## ՄԻ ՔԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԱՐԱՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ.

Կը յուսամ թէ հրատարակած էք իմ նախորդ նամակը, որոյ մէջ առաջին անգամն լինելով կը գրուատէի վանեցիները իրենց այն մի քանի քայլերի մասին՝ որք դէպի ընդհանուր համակրութիւն կառաջնորդեն զիրենք։ Այդպիսի մի նոր ցոյց՝ որ կը նորոգէ սիրտերը, զգացումները, և գաղափարը՝ պատրանք չէ, և ես չեմ կրնար խաբել զիս կամ ուրիշները։ Ստուգիւ այս վերջին ամիսների մէջ մի քանի գօրաւոր առիթներ,